23068

56

# ՀՐԱՀԱՆԳ

## ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԿՆՔՄԱՆ

ՅԵՎ

## ՍՈՑՄՐՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ Ժ.Տ.Խ. ՅԵՎ Հ.Ա.Մ.Խ.

1929 ՅԵՐԵՎԱՆ

17.06.2019
15 JAN 2010

# ՀՐԱՀԱՆԳ

## ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԿՆՔՄԱՆ

ՅԵՎ

## ՍՈՑՄՐՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ Ժ.Տ.Խ. ՅԵՎ Հ.Ա.Մ.Խ.

1929 ՅԵՐԵՎԱՆ

Ա. Մյասնիկյանի անվան Публичная Библиотека
3816-60

23068

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 117
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 2771 բ.
ՏԻՐԱԺ 1500

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԿՆՔՄԱՆ ԱՌԹԻՎ ՀԱՄԿԽ-Ի ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

## *ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԱՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ*

*1. Սեպտեմբերի կեսերից սկսել է սոցիալիստական մրցման ընթացքի և քաղաքական տնտեսական պայմանագրերի կիրառման արդյունքների մասսայական ստուգումը:*

*Այդ նպատակի համար բանվորների ընդհանուր ժողովներում և արտադրական խորհրդակցություններում առանձին ցեխերի, հերթերի և առանձին բաժինների սոցիալիստական մրցման արդյունքների ստուգման համար կազմակերպվում են բանվորական բրիգադաներ:*

Բանվորական բրիգադաներ կազմակերպել առաջին հերթին այդ աշխատանքների համար,

կամավոր ցանկություն հայտնող բանվորներից, սոցիալիստական մրցման հարվածային խմբակների անդամներից և ակտիվ մասնակցություն ընդունող բանվորներից:

Բրիգադները պետք է աշխատեն արտադրական հանձնաժողովների ղեկավարության ներքո: Արտադրական հանձնաժողովները պետք է մանրամասնորեն հրահանգեն և լուսաբանեն բրիգադներին աշխատանքներին մասնակցող ընկերներին, նրանց առաջ դրված խնդիրները և աշխատանքների կարգը ու միաժամանակ խոշորագույն օգնություն ցույց տան բրիգադներին, իրենց աշխատանքների ընթացքում: Բրիգադների ներսում աշխատանքների կազմակերպման և անդամների մեջ աշխատանքի բաժանում կատարելու համար, բրիգադայի անդամներից ընտրվում են ավագ բրիգադիրներ:

2. Բրիգադների աշխատանքների բովանդակությունը և նրանց գործունեության ուղղությունը պետք է լինի՝ ա) Ստուգել սոցիալիստական մրցման գործին բանվորների փաստորեն ներգրավված լինելը և իրականում նրանց մասնակցության խնդիրները. բ) Ստուգել և գնահատել սոցիալիստական մրցման ընթացքում արտադրական հանձնաժողովների և խորհրդակցությունների կատարած աշխատանքները. գ) Ստուգել սոցիալիստական մրցման գործում ադմինիստրատիվ տեխնիկական պերսոնալի ունեցած դերը, տնտեսական մարմինների օժանդակությունը և մասնակցությունը սոց. մրցմանը, մանավորապես սոց. մրցման գործում բանվորների ձեռներեցության խրախուսումը. դ) Մեկ հայտարարի բերել ընդհանուր արդյունքները, տալ գնահատական ցեխի հերթի և բաժնի սոց. մրցման արդյունքներին, և տալ սոցիալիստական մրցման կարգով վերցրած պարտավորությունների կատարման աստիճանի ընդհանուր արդյունքները. ե) Պարզել բոլոր այն պատճառները, որոնք բացասական ազդեցություն են ունեցել սոց. մրցման ըն-

թացքի վրա և տեղն ու տեղը վերացնել այդ թերությունները. միաժամանակ հայտնաբերել սոց. մրցման պրակտիկայի այն արժեքավոր փորձը, վորպիսին անհրաժեշտ է փոխադրել մյուս ցեխերը և ձեռնարկությունները:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել հարվածային խմբակների և բրիգադաների աշխատանքի պայմանների, ձևերի և նրանց աշխատանքների արդյունքների հայտնաբերման գործին. Հարվածային բրիգադները ստանում են խոշոր նշանակություն, բանվորների սոցիալիստական մրցման գործին մասնակից դարձնելու համար, նրանք պետք է դառնան ամենաիրական և մասսայական մեթոդներից մեկը, ու միաժամանակ պետք է հանդիսանան ռացիոնալիզատորական ձեռնարկումների աջակիցներ: Այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ է մանրամասն ստուգել, թե տնտեսական մարմնի կողմից, վոր չափի է հաշվի առնվում և օգտագործվում վերոհիշյալ փորձերը և աշխատանքի



մեթոդները. ու ինչ ուղղությամբ պետք է ընթանան նրանց աշխատանքները հետագայում:

3. Ստուգման աշխատանքներում անհրաժեշտ է գործադրել փոխադարձ ստուգման մեթոդը, մրցման մեջ մտած ցեխերի և հերթերի բրիգադաների ներկայացուցիչների փոխանակության միջոցով: Փոխադարձ ստուգման նման մեթոդը կապահովի աշխատանքների փորձի ճիշտ փոխանակումը: Ստուգում կատարող բրիգադաների աշխատանքների փոխադարձ փոխանակման մեթոդը պետք է գործադրել նաև մրցման մեջ մտած առանձին ձեռնարկությունների նկատմամբ այն դեպքում, յեթե տեխնիկական պայմանները այդ հնարավոր են դարձնում (յեթե ձեռնարկությունները մեկ քաղաքում կամ տերիտորիալ տեսակետից իրար մոտ են):

Բրիգադայի աշխատանքների արդյունքները, նրա յեզրակացությունները և յեզրափակումները անհրաժեշտ է քննության դնել և հաստատել այն ցեխերի և սմենաների բանվորների

ընդհանուր ժողովներում, վորտեղ տվյալ բրիգադան սոց. մրցման ընթացքի ստուգումն է կատարել:

## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

4. *Ստուգման բրիգադների աշխատանքների արդյունքները, պայմանագրերի կիրառումը և վողջ ձեռնարկության սոց. մրցման արդյունքները հաշվառում կատարելու համար,* կազմակերպել հատուկ ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներ. նրանց աշխատանքի համար սահմանելով կարճ ժամանակաշրջան (վոչ ավելի քան յերկու շաբաթ) այն հաշվով. վորպեսզի նրանց աշխատանքը սկսվի հոկտեմբերի 1-ից և ավարտվի վոչ ուշ քան հոկտեմբերի 15-ը:

*Ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովները իրենց աշխատանքների ընթացքում, հիմնա-*



*կանում, գլխավորապես պետք է հենվեն ստուգման բրիգադների յեզրակացությունների ու առաջարկությունների վրա, համեմատելով այդ ակտերը, ձեռնարկության աշխատանքների մասին անտեսական մարմինների հաշվետու տվյալների հետ:* ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովի խնդիրն է՝ կազմել սոց. մրցման աշխատանքների վերջնական արդյունքները տալ վողջ ձեռնարկության սոցիալիստական մրցման ընթացքի գնահատականը և բրիգադների կողմից ի մի հավաքած սոցիալիստական մրցման գործնական փորձի հիման վրա առաջարկություններ մշակել նրա հետագա ծավալման համար նշել անհրաժեշտ ձեռնարկումներ, *և վերջապես ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովները պետք է տան իրենց յեզրակացությունը այն մասին, թե, վոր ցեխը, հերթը կամ բաժինը և կամ թե, վոր բանվորներն են տվել սոց. մրցման լավ արդյունքներ դրանցից, վորոնք են յենթակա պարգևատրման և այլն:*

Հոկտեմբերի կեսերին ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների աշխատանքները ավարտելուց հետո գումարել բանվորների արտադրական կոնֆերենցիաներ, վորտեղ քննության դնել ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովի և անտեսական մարմնի զեկուցումները՝ ձեռնարկության աշխատանքների և 28/29 տնտեսական տարվա ստուգիչ թվերի կիրառման մասին, սոցիալիստական մրցման ընթացքի և պայմանագրի կիրառման արդյունքների մասին: Հիշյալ կոնֆերենցիաներում քննության առնել և հաստատել ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների առաջարկությունները:

## ՍՈՑ. ՄՐՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԱԿՏԻՎ ՈՒ ԼԱՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ ՊԵՏՔ Է ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ

5. Միաժամանակ վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքների հետ միասին, վոչ



ուշ քան նրանց աշխատանքների ժամկետի ավարտումը, արտադրական հանձնաժողովները տնտեսական մարմինների հետ սերտ և համաձայնեցնեն լավ ցեխերի, բրիգադաների, խմբակների և առանձին բանվորների պարգևատրման նորմաները, և նրա վճարման ձևի սկզբունքային խնդիրները, վորպեսզի ժամանակին կազմվեն պարգևատրման հատուկ միջոցներ, կատարելու սոցիալիստական մրցության պարգևատրումն կառավարական զեկույցի հիման վրա այն հաշվով, վորպեսզի ըստ իրենց աշխատանքների արդյունքների պարգևատրման արժանի ցեխը, բրիգադան կամ բանվորները արտադրական կոնֆերենցիայի կողմից նրանց պարգևատրման իրավունքը հաստատելուց հետո, առանց հետագա ձգձգման իսկույն և յեր պարգևատրվեն:

6. Ձեռնարկությունը ամբողջովին պարգևատրելու խնդիրը լուծում է պրոֆ. կազմակերպության և համապատասխան տնտեսական մարմնի փոխադարձ համաձայնությամբ. Հոկ-

տեմբեր, նոյեմբեր ամիսներին պրոֆ. կազմակերպությունները ու համապատասխան տնտեսական մարմինները պետք ե քննության առնեն ձեռնարկության մրցման արդյունքները, նպատակ ունենալով պարգևատրելու մրցման ընթացքում արտադրական հանձնարարությունները և պլանների գերազանցած ու պարգևատրման արժանացած ձեռնարկությունները:

## ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ ՄՐՑՄԱՆ ՆԵՐԿԱ ՏԵՄՊԸ

7. Մրցման ընթացքի ստուգումը, նրա արդյունքների հաշվեառումը պետք ե միաժամանակ հանդիսանա սոցիալիստական մրցման քաղաքական-տնտեսական պայմանագրերի վերակնքման նախապատրաստումը: Բրիգադների աշխատանքների և ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների առաջարկությունների հիման վրա, արտադրական հանձնաժողովները արտադրական կոնֆերենցիաների աշխատանքներից անմիջապես հետո, մրցման արդյունքների հի-



ման վրա, յելնելով 1929–30 տնտեսական տարվա ստուգիչ թվերից պետք ե ձեռնարկեն նոր պայմանագրերի նախապատրաստական և կնքման աշխատանքներին: Ցեխային արտադրական հանձնաժողովները այդ աշխատանքները պետք ե սկսեն ավելի շուտ—անմիջապես բրիգադների աշխատանքները ավարտելուց հետո: Մրցության ցուցանիշների մշակման աշխատանքներում բանվորների գործնական մասնակցությունը ապահովելու համար անհրաժեշտ ե, առաջին՝ ծանոթացնել բանվորներին ձեռնարկության ստուգիչ թվերի ու արդֆինպլանների հետ և յերկրորդը՝ ձեռնարկության սոցիալիստական մրցման ցուցանիշների մշակումը կատարել, յուրաքանչյուր առանձին ցեխի համապատասխան ցուցանիշները կազմելուց հետո: Արտադրական հանձնաժողովները, տնտեսական մարմիններից պետք ե պահանջեն ձեռնարկության արդֆինպլանները իրենց բաղկացուցիչ մասերով՝ ըստ ցեխերի և բաժինների, որպեսզի յուրաքանչյուր ցեխը ունենա իր

մասսավոր արդյունքները, վարպետի բանվորները իմանան իրենց ցեխի արտադրական պարտավորություններ—հանձնարարությունները նրանց չափը և նրանց կշիռը:

## ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԵՋ ՄՏՑՆԵԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. *Սոցիալիստական մրցման ընթացքի ստուգման ժամանակ, ձեռնարկության տնտեսական մարմնի և վարչատեխնիկական պերսոնալի աշխատանքները անհրաժեշտ է յենթարկել հասարակական ամենալայն ստուգատեսի: Մասնավորապես անհրաժեշտ է պարզել թե ինչպես է կիրառվում Ժողկոմխորհի դեկրետը «արտադրական խորհրդակցությունների մասին» և ժողովրդական տնտեսության գերագույն խորհրդի դիրեկտիվները բանվորներին ու արտադրական խորհրդակցություններին նրանց արած առաջարկությունների պարգևատրելը և*



*գործարանային գյուտարարության օժանդակության խնդիրները: Սոցիալիստական մրցման նոր պայմանագրերի մեջ անհրաժեշտ է մտցնել նաև մի քանի վարչական պարտավորություններ, տնտեսական մարմինների նկատմամբ, վորոնք պետք է յերաշխավորեն մրցման ընթացքում ծագող բոլոր հարցերի անհապաղ լուծումը:*

Սոցիալիստական մրցման պայմանագրերի ստուգման հետ միասին կատարել նաև հավաքական պայմանագրերի կիրառման աստիճանի ստուգումը:

9. *Սոցիալիստական պայմանագրերի վերակնքումը զուգակցվում է հավաքական պայմանագրերի աշխատանքներին: Հավաքական պայմանագրերի կիրառման ստուգումը ըստ եյության բանվորների արտադրական և կուլտ-կենցաղային պայմանների լավացման գործում տնտեսական մարմինների վերցրած պարտավորությունների կիրառման աստիճանի ստուգումն է:*

Սոցիալիստական մրցման ծավալման գործում բանվորների արտադրական շրջապատը և նրանց աշխատանքային կուլտ-կենցաղային պայմանները փոքր դեր չեն խաղում: Բանվորների արտադրական կենցաղի ընդհանուր խնդիրների հետ, սոց. մրցումը ստուգող բրիգադաները իրենց աշխատանքների ընթացքում անշուշտ նշվելու յեն: Այդ իսկ պատճառով ԽԱՄԿԽ-ը նպատակահարմար և հնարավոր է համարում հավաքական պայմանագրերի կիրառման ստուգումը անցկացնել սոցիալիստական մրցության պայմանագրերի և նրա արդյունքների ստուգման հետ միաժամանակ, կատարելով այդ աշխատանքները նույն բանվորական բրիգադաների միջոցով:

## ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱՏԵՍԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ՄԻ ՄԱՍՆ Է

10. *Սոցիալիստական մրցման ընթացքի ստուգատեսի հետ միասին անհրաժեշտ է անց-*



*կացնել նաև ձեռնարկության գյուտարարության աշխատանքների ստուգատես: Գյուտարարության ստուգատեսը սոցիալիստական մրցման ընդհանուր աշխատանքների հիմնական մասերից մեկն է հանդիսանում, մի աշխատանք, վորի միջոցով սոցիալիստական մրցման առաջին շարքերն են առաջ քաշում, բանվոր դասակարգի ինքնագործունյա և ստեղծագործող կադրերը—բանվոր գյուտարարները: Գյուտարարության ստուգատեսը իր բովանդակությամբ և կազմակերպչորեն ամբողջովին կարող է կատարվել սոցիալիստական մրցման աշխատանքների շրջանակների սահմաններում: Բանվորների գյուտարարության իրացման աշխատանքների ստուգումը, գյուտարարներին ոժանդակելը և նրանց խրախուսումը պետք է մտնի սոցիալիստական մրցման ընթացքի ստուգման բանվորական բրիգադաների և ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների աշխատանքների մեջ:*

535 23816-60
(12426-57)

## ԱՌԱՆՑ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐԵԼ ԹՈՒՅԼ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

11. Անհրաժեշտ է խստորեն ստուգման ենթարկել արտադրական համաժողովների աշխատանքները, ինչպես են ղեկավարել նրանք սոցիալիստական մրցման գործը, կարողացե՞լ են արդյոք արտադրական համաժողովները, ներկայիս կազմով, կատարել իրենց հիմնական դերը՝ սոցիալիստական մրցման մարտական շտաբի պարտականությունները: Անհրաժեշտ է առանց տատանումների և վճռականորեն խնդիր դնելու այն արտադրական համաժողովները, որոնց կազմը չի կարողացել ղեկավարել սոցիալիստական մրցությունը, ցրել այդպիսիները և ընտրել ձեռներեցություն ունեցող ու գործունյա արտադրական համաժողովների նոր կազմ:

12. *Արդյունաբերության մեջ մրցման արդյունքների ստուգումը միաժամանակ պետք է հանդիսանա արդյունաբերության և սոց. մրցման արդյունքների ստուգումը: Նոր պայմանագրերի վերակնքման շրջանում քաղաքի և գյուղի սոցիալիստական մրցությունը պետք է ընդգրկի նոր ձեռնարկությունների և գյուղերի խոշոր մասը: Նպատակ ունենալով մրցման մեջ մտած գյուղերի սոց. մրցման արդյունքների ստուգումը և գյուղում մրցումն էլ ավելի ծավալելու անհրաժեշտությունը, ձեռնարկությունները պետք է գյուղ գործուղղեն հատուկ բանվորական բրիգադներ:*

13. *Սոցիալիստական մրցման ընթացքի մասսայական ստուգատեսի կազմակերպումը և արդյունաբերության մեջ այդ պայմանագրերի վերակնքումը անշուշտ լայն հասարակայնության ուշադրությունը պիտի գրավի: Բանվորների մրցման ստուգատեսը խոշոր ազդակ պիտի հանդիսանա սոցիալիստական մրցման գործին ներգրավելու պետական հիմնարկությունների ծառայողների, առևտրա-կոոպերատիվ ապարատների և կուլտ-կենցաղային հաստատությունների բանվոր-ծառայողների ամենալայն*

*խավերը։ Ազգաբնակության աշխատավոր տարրերին սպասարկող հիմնարկությունների սոցիալիստական մրցությունը. հիմնականում պետք է հետապնդվի այնպես կազմակերպել իր հիմնարկության աշխատանքները, վորը կապահովի բանվորների և վողջ աշխատավորության կարիքների և պահանջների ամենալավ սպասարկումը։*

Այդ իսկ պատճառով ՀԱՄԿԽ-ը նպատակահարմար է համարում ձեռնարկությունների և կուլտ-կենցաղային հիմնարկությունների, առևտրա-կոոպերատիվ ցանցի և պետապարատի աշխատողների միջև կազմակերպել սոցիալիստական մրցություններ։

## ՍՏՈՒԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԵՐԸ ԳՈՐԾՈՒՂՂԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊՐՈՖ. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

14. ՀԱՄԿԽ-ի նախագահությունը առաջարկում է բոլոր ղեկավար պրոֆ. կազմակերպություններին, սկսած միությունների կենտրոնական կոմիտեներից մինչև շրջանային կոմիտեները ազատել և ձեռնարկություններն ուղարկել իրենց ապարատի կազմի աշխատակիցներից, վորոնք սոց. մրցման պայմանագրերի կիրառման ստուգումը պարզելու և նոր պայմանագրեր կնքելու ամբողջ ժամանակաշրջանում պետք է լինեն տեղերում։ *Եվ այդ աշխատանքների կազմակերպման ու կիրառման գործում ընդունեն անմիջական մասնակցություն. սոցիալիստական մրցության ընթացքի ամփոփման ժամանակ, ձեռնարկություններում գտնվող միութենական ղեկավար կազմակերպությունների բոլոր ներկայացուցիչները անկախ այն հանգամանքից թե ինչ հանձնարարություններով են գործուղվել տվյալ ձեռնարկությունները, սոցիալիստական մրցման արդյունքների ստուգման և նոր պայմանագրերի կնքման վողջ աշխատանքներում պարտավոր են ընդունել ամենաակտիվ մասնակցություն։*

15. Մրցման պայմանագրերի կիրառման, ստուգման և նոր պայմանագրերի վերակնքման գործում միութենական մարմինների ղեկավարությունը ապահովելու, և տեղական պրոֆ. կազմակերպություններին օգնելու համար, ՀԱՄԿԽ-ի և միությունների կենտրոնական վարչությունների նախագահության անդամներից և պատասխանատու աշխատողներից առանձնացնել 120—150 մարդ, և պայմանագրերի ստուգման ու վերակնքման ամբողջ ժամանակաշրջանի համար, գործուղել տեղերը:

16. Առաջարկել Հանրապետական, յերկրային և մարզային Արհմխորհրդների տվյալ նպատակի համար, իրենց կազմակերպության ղեկավար մարմիններից առաջադրել մի շարք ընկերներ և գործուղել ձեռնարկությունները:



## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՂԵԿԱՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Սոցիալիստական մրցման ընթացքը և տնտեսական–քաղաքական պայմանագրերի կատարման արդյունքները, ստուգող բանվորական բրիգադները պետք է կազմակերպվեն ձեռնարկության ամեն մի ցեխում, սմենայում և բաժնում: Բրիգադների կազմակերպման հարցը դրվում է բանվորների ցեխային և սմենային ընդհանուր ժողովներում կամ ցեխերի և սմենաների բանվորական միտինգներում:

2. Բրիգադները առաջին հերթին պետք է կազմակերպել բրիգադայում կամավին կերպով աշխատել ցանկացող բանվորներից և հարվածայիններից (ուդարնիկի), թեթև հեծելազորայիններից և սոցիալիստական մրցման ակտիվ մասնակցող բանվորներից:

Յուրաքանչյուր բրիգադայի կազմը սահմանում է 7—10 հոգի, նայած ցեխի մեծությանը և աշխատանքի ծավալին։ Յուրաքանչյուր բրիգադայի կազմի մեջ պետք է լինի բան. թղթակից։ Այն դեպքում, յերբ ցեխը կամ սմենան մրցում է տվյալ ձեռնարկության այլ ցեխերի կամ սմենաների հետ, մրցող ցեխերը պետք է կատարեն իրենց բրիգադաների ներկայացուցիչներին փոխադարձ փոխանակություն, և ամեն մի բրիգադա իր աշխատանքը պետք է անցկացնի մրցող ցեխի ներկայացուցիչների մասնակցությամբ։

3. Բրիգադաների կազմակերպումից հետո, անմիջապես, միջգործարանային արտադրական հանձնաժողովը հրավիրում է բոլոր կազմակերպված բրիգադաների ժողով, հրահանգում, և նրանց ծանոթացնում իրենց աշխատանքի կարգի ու խնդիրների հետ։ Բրիգադաների հրահանգչական ժողովին, ինչպես նաև հետագա ժողովներին, պետք է ներկա լինեն կուլտ—հանձնաժողովի, աշխատանքի պաշտպանության



հանձնաժողովի և ԳԿՀ-ի բան. մասի ու ՃՏՍ-ի նաև տնտ. մարմնի ներկայացուցիչները, այն բոլոր հարցերին ծանոթանալու, վորոնց հետ բրիգադան գործ պիտի ունենա մրցումը ստուգելու ժամանակ։

4. Բրիգադաների համագործարանային հրահանգչական հավաքույթից անմիջապես հետո, ցեխային կամ սմենային ստուգող հանձնաժողովները պետք է հավաքեն իրենց բրիգադան, վորտեղ պետք է ընտրել բրիգադայի ղեկավար (ավագ բրիգադիր) և պետք է բաժանեն ստուգման աշխատանքը առանձին մասնակիցների կամ բրիգադայի մասնակից առանձին խմբակների միջև, տալով ամեն մեկին տարբեր խնդիրներ։

Բրիգադայի ղեկավարը շաբաթական յերկու անգամից վոչ պակաս, հավաքում է բրիգադան, նրա աշխատանքի ընթացքը և արդյունքները քննարկելու, ծագած դժվարությունները հայտնաբերելու և նրանց վերացնելու համար։

5. Բրիգադայի մասնակիցները արտադրության մեջ իրենց աշխատանքից չեն ազատվում

և սոց. մրցման ստուգման աշխատանքները տանում են աշխատանքի ժամերից դուրս և աշխատանքից հետո:

6. Բրիգադայի ամեն մի մասնակից համառոտ կերպով պետք է գրի թե ինչ է հայտնաբերել սոց. մրցման ստուգման առթիվ, իրեն հանձնարարված աշխատանքը կատարելիս, և իրեն հանձնարարված աշխատանքը վերջացնելուց հետո, իր գրածը պետք է հանձնի բրիգադայի ղեկավարին: Բրիգադայի ամբողջ աշխատանքը վերջացնելուց հետո պետք է հավաքել բրիգադայի յեզրափակման խորհրդակցություն, վորտեղ մասնակիցների գրավոր դիտողությունների ու կարծիքների կենդանի փոխանակության հիման վրա, պետք է հանել բրիգադայի յեզրակացությունները ստուգման արդյունքների, և իրենց ցեխում, ամենայում (ամբողջությամբ) պայմանագիրը իրականացնելու վերաբերյալ:

7. Բրիգադայի յեզրակացությունները դրված են բանվորների ցեխային կամ ամենային ժողովում ի հաստատություն, վորտեղ բրիգադան հաշվետվություն է տալիս իր աշխատանքների մասին:



## ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԻ ԲՐԻԳԱԴԱՆ

Բանվորական բրիգադաների վրա դրվում են հետևյալ խնդիրները՝ ա) ստուգել սոց. մրցման ընթացքը իրենց ցեխում կամ ամենայում, նրա արդյունքները ու բանվորների ներգրավումը. բ) պարզել բոլոր պատճառները, վորոնք արգելք են հանդիսացել սոց. մրցման ընթացքի լայն ծավալմանը և գ) տալ առաջարկներ, թե ինչպես կարելի յե յեղած թերությունները վերացնել: Այս խնդիրներն իրագործելու համար բանվորական բրիգադաներն իրենց ցեխում և ամենայում պետք է՝

1. **Ստուգել, թե արդյոք լավ են ծանոթացըրված բանվորներին սոց. մրցման նպատակին և խնդիրներին.** քննել են արդյոք սոց. մրցման հարցերը բանվորների ընդհանուր ցեխային կամ ամենային ժողովներում արտադրական և

ցեխային պրոֆ. ակտիվի խորհրդակցություններում, ճաշվա ընդմիջումների զրույցների ժամանակ և կարմիր անկյուններում. կա արդյոք ցեխային պատի թերթ և ինչպես է լուսաբանվել նրա մեջ սոց. մրցման հարցերը. անց է կացրված արդյոք ժողովներ սոց. մրցման հարցերով՝ բանվորների, առանձին գործալքողների, յերիտասարդների, հին բանվորների, նոր կադրերի մեջ: Յեղել են արդյոք սոցիալիստական մրցման թշնամական վերաբերմունքի, կամ սոց. մրցման չմասնակցելու ու մրցահրավերը չընդունելու դեպքեր: Բանվորական, վո՞ր խմբակների կողմից և նկատվել այդ դեպքերը—նրանց պատճառները, կոնկրետ կերպով, ինչումն է արտահայտվել նրանց թըշնամական վերաբերմունքը. ինչպես է վերաբերվել դրան գործարկոմը, ցեխային արհբյուրոն և արտահանձնաժողովը:

2. Գիտեն արդյոք ցեխի բանվորները. թե ում հետ է մրցում իրենց ձեռնարկը. ծանոթ են արդյո՞ք նրանք այն խնդիրների և պարտավո-



նությունների հետ, վորոնք դրվում են նրանց վրա քաղաքական-տնտեսական պայմանագրերով:

3. Ինչ չափով են բանվորները ներգրավել սոց. մրցման աշխատանքներում: Ցեխում քանի հարվածային բրիգադներ կամ խմբակներ են կազմակերպված, և վորքան է մասնակցողների թիվը նրանց մեջ. քանի հոգի մրցում են անհատապես. սոց. մրցման փաստացի մասնակցող բանվորների թիվը հանդեպ իրենց ցեխի բանվորների ընդհանուր թվի:

4. Ինչպես է մասնակցում սոց. մրցմանը բանվորների պրոֆ. ակտիվը. պրոֆ. ակտիվիստներից բոլորն են արդյոք մասնակցում. ակտիվից քանի հոգի յեն մասնակցում հարվածային բրիգադներում, քանիսն անհատական մրցման (իրե՞նց նախաձեռնությամբ, թե՞ ուրիշների մրցահրավերով. քանի՞ կուսակցական և կոմյերիտական են (ցեխի ընդհանուր թվից) մասնակցում սոց. մրցմանը և քանիսը հարվածային բրիգադներում:

5. Ի՞նչպես են կազմակերպվել անհատական մրցումները: Ինչ ազդեցություն են գործադրել պրոֆ. բյուրոներն ու արտհանձնաժողովները մրցահրավերների ընդունման և բանվորներին անհատական սոց. մրցման մասնակից անելու գործում: Ինչպես և ինչքան արագությամբ, գործարկոմը և արտհանձնաժողովը հանձնել են ցեխին անհատական մրցահրավերները, վորոնք արված են այլ ցեխերի բանվորների կողմից, վորքանով է ավելացել անհատական մրցման մեջ մտնող բանվորի արտադրանքը (համեմատել՝ միջին արտադրանքը սոց. մրցման ժամանակամիջոցում գոյություն ունեցող նորմաներով, և միջին արտադրանքով, մինչև սոց. մրցման անցնելը—յերեք ամիսներում): Սոց. մրցման մասնակցողների—փչացումների (բրակ) տոկոսը փոխվել և արդյոք գործալքումների քանակը:

6. Բանվորների քանակը, վորոնք կամավոր կերպով իջեցրել են գնահատումները: Իջեցումների չափը. քանի մրցահրավեր է յեղել



գնահատումների իջեցման համար: Ինչպես են վերաբերվում այս գործին բանվորները, ինչպես է նայում ադմինիստրացիան գնահատումների իջեցման վրա:

7. Հարվածային բրիգադաների կազմը. Հարվածային բրիգադների կազմում, վորքան կոմունիստներ, կոմյերիտականներ և անկուս. յերիտասարդներ ու կանայք կան: Բրիգադաներում կա արդյոք աշխ. ծրագիր, և հարվածային բանվորության առաջ, վորքան կոնկրետ է դնում նա արտադրական խնդիրները:

Աշխ. ծրագրի քաղաքական բովանդակությունը: Աշխատանքային կարգապահության դրությունը հարվածայինների մեջ. Հարվածայինների արտադրանքն ըստ ամիսների, նրանց ամբողջ աշխատանքի ընթացքում, համեմատած վոչ հարվածային բանվորների արտադրանքի հետ. Հարվածային բրիգադների աշխատանքային պայմանները, նյութեղենի և հում նյութի վորակը. վորոնցով մատակարարվել են հարվածայինները և բավարար չափով

*ապահովված են արդյոք տեխնիկական ղեկավարությամբ։ Հարվածայիններն արտադրական աշխատանքներում ի՞նչ նոր մեթոդներ են հայտնաբերել և կիրառել։ Օգտագործել է արդյոք ադմինիստրացիան այդ մեթոդները լայն կիրառման համար։ Բրիգադայի աշխատանքը, ինչպես է անդրադարձել ցեխի աշխատանքի լավացման վրա։ Հրավիրվել են արդյոք հարվածայինների խորհրդակցություններ բրիգադայում և հարվածային բրիգադների ցեխային ու հանրագործարանային խորհրդակցություններ։ Ցեխային ադմինիստրացիան և ցեխ. պրոֆ. բյուրոն, վորքան են աջակցել հարվածային բրիգադների աշխատանքներին։ Բանվորության վերաբերմունքը հանդեպ հարվածային բրիգադների։ Եղել են արդյոք հարվածային բրիգադների ձեռքի տակ գտնվող մեքենաների ու ստանոկների դիտավորյալ փչացման դեպքեր։*

8․ Ցեխի (սմենայի) աշխատանքի արդյունքները սոց․ մրցման ժամանակվա ընթացքում։



*Պրոդուկցիայի արտադրման, աշխատանքի արտադրող., ինքնարժեքի իջեցման, բրակի պակասեցման, աշխատավարձի բարձրացման, և պրոգուլների նվազեցման խնդիրներում։ Համեմատել այդ արդյունքները ցեխի կոնտրոլ ձեռնարկումների թվերի հետ։ Յեթե ցեխը կամ սմենան սոց. մրցման է հրավիրել ցեխին կամ սմենային, կա արդյոք ցեխային սոց. մրցման պայմանագիր, և ինչպես է նա կատարվել։ Համեմատել ցեխի աշխատանքի արդյունքները, պայմանագրով հանձն առած պարտավորությունների հետ. ինչպես է կազմվել ցեխային պայմանագիրը և ինչպես են բանվորները մասնակցել նրա մշակման և ընդունման գործին։ Բանվորների կարծիքը նոր պայմանագրերի մասին։*

9․ Ցեխի աշխատանքի պայմանները սոց․ մրցման ընթացքում։ *Ի՞նչ դրության մեջ է հումնյութի և օժանդակ նյութեղենի, գործիքների մատակարարման գործը, նրանց վորակն ու արտադրության ներսում յեղած փոխադրական*

3

միջոցների վիճակը: Ինչ դժվարություններ ու արգելքներ են առաջացել դրա հետևանքով սոց. մրցման ընթացքում: Աշխ. պաշտպանության թերությունները, խախտումները տարբեր գնահատման աշխատանքներում և հավաքական պայմանագրերում. ինչպես են այդ բոլորն անդրադարձել սոց. մրցման ընթացքի վրա:

10. Ադմինիստրատիվ տեխնիկական կազմի և ՃՏՍ-ի դերն ու մասնակցությունը սոց. մրցման գործում: Ի՞նչ է ձեռնարկել ադմինիստրացիան ցեխի աշխատանքներում արտադրական թերությունները վերացնելու համար, վորքան բան է վերացվել—ինչ միջոցներ է ձեռնարկել ադմինիստրացիան հարվածայնության, բանվորության անհատական սոց. մրցումը և նույն բանվորության կողմից հայտնաբերված նոր մեթոդների կիրառումը ծավալելու ուղղությամբ. ցեխի ճարտարագետ-տեխնիկական աշխատողների մեջ կազմակերպված է՞ յեղել արդյոք մրցում, ցեխի (ամենայի) արտադրու-



թյան ընթացքն ավելի լավ ղեկավարելու և հարվածային բրիգադաներին չեփարկելու ու նրանց ոժանդակելու համար:

11. Ցեխային արտադրական հանձնաժողովների ու խորհրդակցությունների աշխատանքը սոց. մրցման ժամանակվա ընթացքում:

Հաճախ են հրավիրվել արդյոք արտահանձնաժողովների նիստերը. արտախորհրդակցությունների հաճախելիությունը և արված առաջադրությունների քանակը (համեմատել նախորդ ժամանակաընթացքի հետ): Ի՞նչ ուղղությամբ է փոխվել այդ առաջադրությունների բնույթը: Տալ արտախորհրդակցություններին առաջադրությունների գնահատումը թվերով և այդ առաջադրությունների հետևանքով ունեցած տնտեսման չափը (համեմատել այն տնտեսությունների հետ, վորոնք տվել են 28–29 թ. առաջին կիսամյակին բանվորների կողմից արված առաջադրությունները): Բանվորության առաջադրությունների իրագործումը. ավելացրել են արդյոք իրագործումները և ինչ չա-

Փ–Վ: Գիտի արդյոք բանվորությունը, արտ-
խորհրդակցությունների մասին ժողկոմխորհի
հրատարակած դեկրետը:

Ինչպես և արտխորհրդակցությունը պարզա-
բանել բանվորներին այդ դեկրետը. ինչպես և
ադմինիստրացիան իրագործում արտխորհր-
դակցությունների վերաբերյալ յեղած դեկրետը
և ունել և արդյոք այդ դեկրետը, լավացնելու
բանվորության առաջադրությունների իրա-
գործման աշխատանքը: Ավելացել և արդյոք
գյուտարարությունների և բանվորության
պատենտի ընդունակ առաջարկությունների
քանակը ցեխում, ի՞նչպես և ադմինիստրացիան
իրագործում բանվորության առաջարկություն-
ները ու գյուտարարությունը պարգևատրելու
վերա յեղած Գերժողտնտխորհի հրահանգը:
Ի՞նչպես և արտխորհրդակցությունը ղեկավարել
սոց. մրցումը ցեխում (ամենայում). ինչ է
ձեռնարկել նրա ծավալմանը և բանվորությանը
սոց. մրցման մեջ ներգրավելու համար: Ար-
տադրական հանձնաժողովը իր նիստերում սոց.



մրցման ընթացքի վերաբերյալ ի՞նչ կոնկրետ
խնդիրներ և քննություն տալ և փոխադրել
արտխորհրդակցություն, վորքան հաճախ են
ժողովվել արտհանձնաժողովները և վորչափ է
ուժեղացել նրա աշխատանքը. փոխվել է ար-
դյոք նրա կազմը, սոց. մրցման աշխատանքնե-
րի ղեկավարմանն անցնելու հետևանքով:

12. Ի՞նչ է արված ցեխում կուլտ. և աշխ-
պաշտպանության հանձնաժողովների գծով
սոց. մրցման ծավալմանն ոժանդակելու և տե-
ղական պատի լրագրի նկատմամբ:

13. Բրիգադայի յեզրակացությունն ու նրա
առաջարկությունները. ինչ պետք է անել սո-
ցիալիստական մրցման հետագա ծավալման
ուղղությամբ և նրա ընթացքին խանգարող
պատճառները վերացնելու համար: Առաջար-
կություններ նոր տնտեսական-քաղաքական
պայմանագրերի կնքման մասին:

## ԲՐԻԳԱԴԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Իրենց աշխատանքների ծրագիրը կատարած լինելու նպատակով բրիգադները պարտավոր են.

1. Մրցման ընթացքի վերաբերյալ իրենց ամբողջ ստուգողական աշխատանքներն անցկացնել, տանելով միաժամանակ բանվորների մեջ, լայն բացատրական աշխատանք. ստուգման աշխատանքների նպատակների, իրենց աշխատանքների խնդիրների մասին, ծավալել լայն ինքնաքննադատություն ու մրցման աշխատանքների թերությունների քննադատություն բանվորների կողմից: Այս նպատակով լայն կերպով գործադրել բանվորների և նրանց առանձին խմբերի հետ անհատական զրույցներ ունենալու մեթոդը. զրույցներ, մրցմանը չմասնակցողների, պրոգուլշիկների, հարվածային բրիգադների և թղթակիցների ժողովներում:



2. Մրցման արդյունքներն ըստ ցեխի (ամբողջությամբ) կամ ըստ առանձին բրիգադաների և բանվորների, ստուգելիս հնարավոր է ցեխի աշխատանքների ընթացքի մասին տըվյալներ վերցնել վարչությունից, ստուգել այդ պլանները և բաղդատել այդ տվյալները, վորպես ցեխի աշխատանքների մրցման շրջանի արդյունքներ, ցեխի արտադրական ծրագրի հանձնարարությունների հետ բոլոր ցուցանիշներով:

3. Մրցման ընթացքի և արտադրական խորհրդակցությունների գործունեության ղեկավարության դրությունը պարզելիս—ստուգել ցեխի պրոֆ. բյուրոների և արտադրական հանձնաժողովների գործունեությունը. այդ ժամանակվա ընթացքում օգտագործել նրանց աշխատանքների մասին յեղած բոլոր նյութերը (արձանագրություններ և այլն): Բանվորների առաջարկների և գյուտերի կիրառման դրությունն ու նրանց պարգևատրումը ստուգելիս բանվորական բրիգադան կապվում է

գործարկման բանվորական գյուտարարության ստուգատեսի հանձնաժողովների հետ։ Գյուտարարության ստուգատեսը ցեխում անցկացնելու համար բրիգադայի կազմում մտցված և ստուգատեսի հանձնաժողովի ներկայացուցիչը· այսպիսով ցեխում կամ ամենայում, մրցման ընթացքի ստուգումը պետք է կատարվի մրցման շրջանում ցեխային պրոֆ. կազմակերպությունների աշխատանքների և ցեխային վարչությունների գործունեության բառուգման գծով, ստուգելով թե ինչպես է հասկացրվել սոցիալիստական մրցման խնդիրները և ինչպես է մասնակցում նրանում միութենական մասսան։ Դրան զուգընթաց բրիգադան իր ծրագիրը պետք է բաժանի մի քանի մասերի և հանձնարարի բրիգադայի յուրաքանչյուր մասնակցողին կամ մասնակցողների առանձին խմբերին, կատարել կոնկրետ հանձնարարություններ մրցման աշխատանքների, ստուգման ծրագրի, վորոշ մասերի վերաբերյալ։



## ՀԱՄԿԽ-Ի ԵՎ ԽՍՀՄ ԺՈՂՏՆՏԽՈՐՀԻ ՀՐԱՀԱՆԳՁԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.—

### ԲՈԼՈՐ ԱՐՀԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ԸՆԿԵՐՆԵՐ

Նախընթաց 1928–29 թ. տնտեսական տարին անցավ յերկրի ինդուստրացման հետագա արագացման և սոցիալիստական շինարարության բոլոր ձևերի ուժեղացման ուղղությամբ։

Այս անկասկած նվաճումների հետ միասին ՀԱՄԿԽ-ը և ԽՍՀՄ Ժողտնտխորհը հարկադրված են արձանագրել մի շարք թերություններ։ Ծրագրային առաջադրումներն աշխատանքի արտադրողականության վերաբերյալ լրիվ չափով չի կատարված։ Լրիվ չի կատարված նաև առաջադրումներն ինքնարժեքի իջեցման վերա-

րերյալ: Դեռ թույլ է ծավալված սոցիալիստական մրցումը: Աշխատանքային դիսցիպլինան, չնայած նրա վերջին լավացմանը, շատ ձեռնարկություններում դեռևս անբավարար է: Առանձնապես վտանգավոր է արդյունաբերական արտադրանքի որակի վատացումը, որն առանձին դեպքերում ի չիք է դարձնում քանակային նվաճումները: Դրա հետ միասին անցած տնտեսական տարում տեղի ունեցին նաև լուրջ դժվարություններ, հացի և հում նյութի մթերման բնագավառում և ընդհատումներ արդյունաբերությանը գյուղատնտեսական հում նյութով մթերելու և արդյունաբերական կենտրոնները պարենավորելու մեջ: Այս դժվարությունները բխում են մեր տնտեսական վերելքից տեխնիքապես հետամնաց երկրում և գյուղի ու քաղաքի կապիտալիստական տարրերի աճող դիմադրությունից՝ հանդեպ բանվոր դասակարգի սոցիալիստական հարձակմանը: Այնուամենայնիվ չնայած այդ դժվարություններին և հակառակ աջ օպորտունիստական խմբավորումների գուշակություններին, հնգամյակի առաջին տարվա ծրագիրը, իր գլխավոր մասերում, կատարված է գերազանցելով 28–29 թ. համապատասխան ծրագրային առաջադրումները: Այս է անցյալ տնտեսական տարվա հիմնական նախնական արդյունքները:



Արդյունաբերության վերակառուցումը և երկրի ինդուստրացման արագ տեմպը, ընթացել է բանվոր դասակարգի նյութական ու կուլտուր–կենցաղային դրության հետագա և անշեղ աճման հետ միասին: Տարեկան միջին ամսական աշխատավարձի աճումը 28–29 տարվա նոմինալով 27–28 տարվա հետ համեմատած նախնական տվյալներով արտահայտվել է 10%, հանդեպ ծրագրի 7%–ի: Նոմինալ աշխատավարձի բարձրացման հետ միասին առաջ է ընկել նաև ռեալ աշխատավարձի բարձրացում (2—3%), այնուամենայնիվ հետ է մնացել ծրագրված տեմպից:

Բացի դրանից բանվոր դասակարգի ռեալ

կենտական մակարդակին անցած անտեսական տարում լավացել է ի հաշիվ բանվորների կենցաղի բարելավման ֆոնդի գումարների ավելացման մինչև 72·000·000 ռ. (30 միլիոն ռուբլի ավել, համեմատած 27–28 տարվա հետ), բնակարանային շինարարությունը՝ մինչև 163 մլ. ռ. հատկացումների (30 միլիոն ռ. ավել, համեմատած անցյալ տարվա հետ), սոցիալական ապահովագրության ծախսերի ավելացումների մինչև մեկ միլիարդ ռուբլի (177 մլ. ռ. ավել անցած տարվա հետ համեմատած), մսուրների, ակումբների և այլ ծախսերի ավելացումների:

1928–29 տարում մենք ունեցել ենք նաև զբաղված բանվորների թվի հետագա աճում: Արդյունաբերության մեջ բանվորների թիվն ավելացել է 150·000 մարդով մեկ տարում: Անցած տարին առաջին տարին է, վոր ձեռնարկները մասսայորեն անցել են 7 ժամվա բանվորական օրվան: 7 ժամվա բանվորական օրվա անցել են (հաշված նաև 27–28 տարվա անցած-



ներին) 319 ձեռնարկություններ, վորոնցում զբաղված են 400·000 բանվորներ:

Սոցիալիստական շինարարության և յերկրի պաշտպանության շահերը, յերկրի բանվոր դասակարգի և աշխատավորական մասսաների նյութական բարելավվող վիճակի վրա հիմնըված, որ ավելի աճող պահանջների բավարարումը, ժողովրդական ամբողջ տնտեսության հասունացած և անհետաձգելի կարիքները, պահանջում են արդյունաբերության ինդուստրացման և վերակառուցման ավելի արագ տեմպն ու գյուղական տնտեսության վերակառուցումը սոցիալիստական հիմունքներով և դրանից բղխող անհրաժեշտությունը—կատարել հնգամյա ծրագրի առաջադրումները ամենակարճ ժամանակամիջոցում:

Դրան համեմատ 29–30 թ. համար արդյունաբերության գծով արված հանձնարարությունը, վորով զգալիորեն գերազանցվում են հնգամյակի յերկրորդ տարվա համապատասխան ցուցանիշները. Հիմնական ծախքեր արդյունաբերու-

թյան համար նախատեսնված են ծրագրով 3 միլիարդ ռուբլուց ավել, և էլեկտրոշինարարությունը կես միլիարդից ավել՝ արդյունաբերական արտադրանքի քանակի ավելացում 32%, այդ թվում արտադրության միջոցների արտադրության ավելացում՝ 42%, ինքնարժեքի իջեցում—10%, աշխատանքի արտադրողականության բարձրացում 23%, նոմինալ աշխատավարձի բարձրացում արդյունաբերության մեջ միջին հաշվով 9% և ռեալը 13—14%-ով։

Արհմիությունները և տնտեսական մարմինները պետք է հաշվի առնեն անցած տարվա հավաքական պայմանագրերի կամպանիայի ընթացքում, տեղի ունեցած իրենց սխալները, վորը մեծ մասամբ անց է կացվել վորպես նեղ գործնական խնդիր, առանց հարկ յեղած կապի, յերկրի առաջ դրված ընդհանուր քաղաքական, տնտեսական խնդիրների հետ։

Հավաքական պայմանագրերի առաջիկա կամպանիան, կազմակերպելով բանվորական մասսաների նրանց նյութական և կենցաղային հարցերի շուրջը, պետք է անցկացվի վորպես լայն տնտեսական-քաղաքական կամպանիա։



Արհեստակցական և տնտեսական մարմինները գալիք հավաքական կամպանիայի ընթացքում պետք է կենտրոնացնեն բանվոր դասակարգի ուշադրությունը տնտեսական — քաղաքական կոնկրետ խնդիրների վրա, վորոնք բղխում են 29-30 թ. համար արված տնտեսական արտադրական հանձնարարություններից յուրաքանչյուր ձեռնարկության համար սահմանված աշխատանքի արտադրողականության բարձրացման հարցերի, աշխդիսցիպլինայի ամրացման, ինքնարժեքի իջեցման, վերադիր ծախսերի կրճատման, արտադրանքի վորակի լավացման, մինչ-արդյունաբերության ռեսուրսների մոբիլիզացիայի, անընդհատ շաբաթի կիրառման և այլոց վրա։

Սա ամենակատեգորիկ կերպով պահանջում է լավացնել արդյունաբերության աշխատանքների վորակը, ուժեղացնել ձեռնարկումները ռա-

ցիոնալացման ուղղությամբ, ճիշտ է ռացիոնալ կերպով օգտագործել բանվորական ուժը, ամենալավ կերպով կազմակերպել աշխատանքները, մաքսիմալ չափով օգտագործելու ներքին արդյունաբերական ռեսուրսները, բարձրացնել արտադրանքի վորակը, պակասեցնել բրակը, ակամա դադարը, ժամանակին և անդադար արդյունաբերությանը հում նյութով մատակարարել, եժանացնել շինարարությունը և այլն։

Միությունների 8-րդ համագումարի առաջադրված խնդիրը այն մասին,—վոր բանվոր դասակարգը մաքսիմալ չափով պետք է համախմբված լինի, վոր նրա ակտիվությունը, եներգիան է, ինդուստրացման համար վերցրած տեմպը իրագործելու նպատակով, պայքարելու ուժը, հակահարված տալու համար այն բոլոր փորձերին, վորոնք կարվեն ներկայիս հավաքական պայմանագրերի կամպանիան դանդաղեցնելու ուղղությամբ—պետք է ստանա իրեն ռեալ իրագործումը։



Արդյունաբերության առաջադրումների վորակային և քանակային նվաճումների գործում հսկայական դեր պետք է խաղա սոցիալիստական մրցումը և նրա կողմից բարձրացրած բանվոր դասակարգի ինիցիատիվան ու կամքն՝ ուղղված արդյունաբերության լավացմանը։

Այս բոլոր խնդիրների հաջող կատարումը պահանջում է, վորպեսզի գործարանների և ֆաբրիկաների ղեկավարների ձեռքում մաքսիմալ չափով կենտրոնացած լինի ձեռնարկության տնտեսական կյանքի կառավարչությունը և սահմանի արտադրությունը կառավարելու այնպիսի կարգ, վորը ապահովի արտադրության մեջ դրված յուրաքանչյուր անձի—սկսած տեսչից մինչև շարքային բանվորը,—յենթակայությունը և պատասխանատվությունը իրեն հանձնարարած գործի համար և վորը տեղի չտա անպատասխանատվության և փաստացի անտերության արտադրությունում, վորակի հանգամանքը ընկնում է նրանից, վոր

մեկ մարմինը խառնվում է մյուս մարմնի ֆունկցիաների մեջ:

Հավաքական պայմանագրերը վերակնքելիս արհմիությունները և տնտմարմինները պետք է այնպես շաղկապեն բանվորական մասսաների պահանջները սոցիալիստական շինարարության զարգացման շահերի հետ, վորպեսզի ապահովվի արտադրական տնտեսական առաջադրումների կատարումը մեկ կողմից և բանվոր դասակարգի տնտեսական և կուլտուր-կենցաղային դրության արդֆինպլաններով նախատեսված սահմաններում հետագա լավացումը—մյուս կողմից:

Ուժեղացնելով արհմիությունների աշխատանքները բանվորների ու ծառայողների նյութական և կենցաղային ու կուլտուրական կարիքները հոգալու գործում, շաղկապելով այդ աշխատանքները բանվոր դասակարգի ընդհանուր շահերի ու խնդիրների հետ, միաժամանակ արհեստակցական և տնտեսական մարմինները վճռական պայքար պետք է մղեն առանձին խումբ բանվորների հետամնաց, հաճախ կորզող, տրամադրությունների դեմ, վճռական՝ բոլշևիկյան հակահարված տան հակահեղափոխական տարրերի ելույթներին, տրոցկիզմի և աջ օպորտունիստական տրամադրությունների մնացորդներին, այդ պայքարում հենվելով առաջավոր ակտիվ բանվորական շերտերի վրա:

## 1. ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Տալով հսկայական պրակտիկ և քաղաքական նշանակություն ներկայումս գոյություն ունեցող պայմանագրերի լրիվ և իր ժամանակին կիրառմանը, ՀԱՄԿԽ-ը և Ժողտնտխորհը առաջարկում են բոլոր միությունական ու տնտեսական մարմիններին հոկտեմբերի ընթացքում անցկացնել պայմանագրերի կիրառման մասսայական ստուգում: Պայմանագրերի կիրառման ստուգման արդյունքների մասին զեկուցումներ պետք է տան տնտեսական մարմինները, միու-

թյունը և բանվորական բրիգադները բանվորների համագործարանային ու ցեխային ժողովներում և համագործարանային կոնֆերանսներում, այնտեղ, որտեղ հնարավոր չէ հրավիրել համագործարանային ընդհանուր ժողովներ:

Հավաքական պայմանագրերի արդյունքների մասին զեկուցում տալու հետ միասին, տնտեսական մարմինները պարտավոր են հաշիվ տալ բանվորների առաջ տվյալ ձեռնարկության ընթացիկ տնտեսական տարվա արդֆինծրագրերի առաջադրումների կիրառման և աշխատանքների արդյունքների մասին ու տեղեկացնեն գալիք տնտեսական տարվա առաջադրումների մասին:

Հավաքական պայմանագրերով սահմանված պարտականությունները խախտելու և չկատարելու համար մեղավորները պետք է պատասխանատվության ենթարկվեն սահմանված ընդհանուր կարգով: Այս բանն ավելորդ անգամ պետք է համոզի բանվորներին նրանում, որ



ղեկավար. արհեստակցական ու տնտեսական մարմինները միանգամայն անհրաժեշտ են համարում կատարել հավաքական պայմանագրերով իրենց վրա վերցրած պարտականությունները և որ չկատարողը խորհրդային միության օրենքներով խիստ կերպով պատժվում է:

Հավաքական պայմանագրերի կիրառումը ստուգելիս պետք է բանվորների ուշադրությունը սևեռել այն բանի վրա, որ պայմանագիրը, որպես յերկկողմանի պայմանագիր, պարտավորություն է դնում ինչպես տնտմարմինների նույնպես և արհեստակցական միությունների ու իրենց-բանվորների վրա, նամանավանդ աշխ. դիսցիպլինայի, արտադրողականության բարձրացման, կահավորման հետ խնամքով վերաբերվելու և այլոց մասին: Ստուգման պրոցեսում լրիվ չափով պետք է հայտնաբերվեն այդ մոմենտները, ինչպես և պետք է հայտնաբերվեն տնտեսական մարմինների, արհեստակցական միության ու իրենց բանվորների կողմից չկիրառման պատճառները, մշակելով մի-

ջոցներ այդ պատճառները վերացնելու ուղղությամբ:

## 2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Ի նկատի ունենալով, վոր ընթացիկ տնտեսական տարվա ընթացքում մեր ամբողջ տնտեսական և քաղաքական գրությամբ պահանջված բեկումը ծանր և թեթև ինդուստրիայի աշխատավարձի բարձրացման տեմպի մեջ առաջ չի բերված, դրա հետևանքով միությունների 8-րդ համագումարի հրահանգները այդ առթիվ կիրառված չեն: ՀԱՄԿԽ-ը և ԽՍՀՄ ժողտնտխորհն անհրաժեշտ են համարում հավաքական պայմանագրերի վերակնքման կամպանիայի ընթացքում առաջ բերել աշխատավարձի բարձրացում, հետամնաց (աշխատավարձի տեսակետից) շրջանների (Ուրալ, Դոնբասս և այլն) արդյունաբերության գլխավոր ճյուղերում (քարածխային, հանքային, մետաղարդյունաբերության, մանվածային, հիմնական քիմիական և ցեմենտի):

Արդյունաբերության այս ճյուղերի աշխատավարձի բարձրացման համար ՀԱՄԿԽ-ի և ժողտնտխորհի համաձայնությամբ առաջարկված է ծախսել—40 միլիոն ռուբլի: Այդ միջոցները պետք է օգտագործվեն պայմանագրերը կնքելիս 1930 թ. հունվարից մինչև հոկտեմբեր ամիսներում:

Աշխատավարձի բարձրացման հիմքում պետք է դրվեն հետևյալ սկզբունքները՝

ա) Աշխատավարձի սիստեմի կանոնավորումն այնպես, վոր բանվորը շահագրգռված լինի բարձրացնել իր վորակը և աշխատանքի արտադրողականությունը·

բ) Աշխատավարձն ավելացնել արդյունաբերության գլխավոր ճյուղերում ինչպես առանձին շրջաններում (Ուրալ, Դոնբասս և այլն), նույնպես և արտադրության միատեսակ ճյուղերում, ա-պերում նույն կամ տարբեր շրջաններում, ա-

պահովելով վորակյալ բանվորների աշխատավարձի բարձրացումը:

գ) Արդյունաբերության հիմնական ճյուղերում, վորոնք բանվորական ուժով դեֆիցիտային են աշխատավարձը բարձրացնել, և այդպիսով ստեղծելով ապրանչան նրա ամրացմանը արտադրության մեջ և նրա վերարտադրության, բանվորների այդ խմբակների ճիշտ տարիֆիկացիայի պարգևատրման սիստեմի կիրառման և այլն միջոցներով:

դ) Միատեսակ վորակի բանվորների խմբերի աշխատավարձի հավասարեցում միևնույն շրջանում, վորտեղ վոչ ճիշտ գնահատումների հետևանքով զգալի տարբերություն է առաջացել նրանց վարձատրման մեջ:

Միևնույն ձեռնարկության հետամնաց բանվորների խմբակների աշխատավարձի հավասարեցում և առաջին հերթին վորակավոր բանվորական ուժի:

Այս դեպքում պետք է ուշադրություն դարձնել ժամանականով և գործարքային սիստեմով



աշխատողների աշխատավարձի հավասարեցմանը, սահմանելով արտադրանքի ճիշտ տեխնիկական նորմաներ և այլն:

ե) Տարիֆային ռեֆորմայի վերջնական անցկացումը արդյունաբերության հիմնական ճյուղերում:

Աշխատավարձի ծրագրային բարձրացումը պետք է կատարվի ծրագրով նախատեսված և ԽՍՀՄ ժողտնտխորհի, ՀԱՄԿԽ-ի ու համապատասխան միության Կենտկոմի հետ համաձայնեցված գումարների սահմաններում: Լեռնագործների միության գծով աշխատավարձի բարձրացումը հիմնականում պետք է տարածվի քարածուխի արդյունաբերության (առավելապես գետնի տակ աշխատող բանվորների և դեֆիցիտային պրոֆեսիաների տեր վորակավոր բանվորների վրա, վորոնց աշխատավարձը հետ է մնացել նույնանման պրոֆեսիայի աշխատավարձից) և հանքային արդյունաբերության վրա նաև մասնակի կերպով ազբեստի և աղի արդյունաբերու-

թյունների վրա։ Մետաղագործների միության գծով աշխատավարձի բարձրացումը պետք է տարածվի գլխավորապես հետամնաց շրջանների բանվորների վրա և արդյունաբերության հետամնաց ճյուղերի վրա, առավելապես սև մետալուրգիայի։ Քիմիկոսների միության գծով—հիմնական քիմիական արդյունաբերության վրա վերացնելու համար այն կորվածությունը, վորը գոյություն ունի առանձին արտեստների մեջ և մասնակի կերպով ազոտի արդյունաբերության վրա։ Մանածագործների միության գծով—ավելի մեծ չափով հետամնաց (աշխատավարձի տեսակետից) ձեռնարկությունների վրա։ Կառուցողների միության գծով—ցեմենտի արդյունաբերության վրա։

Արդյունաբերության այն ճյուղերում, վորտեղ նախատեսնվում է աշխատավարձի մեխանիկորեն բարձրացում առանձին հետամնաց բանվորական խմբերի համար, պետք է նախատեսնվի նաև աշակերտների աշխատավարձի բարձրացում, վորի չափը սահմանվում է մի-



ության կենտկոմի կողմից համաձայնության գալով տնտմարմնի հետ, ֆոնդի բաժանման ժամանակ։

Դրա հետ միասին արդյունաբերության բոլոր ճյուղերում աշակերտների վարձատրման լավացումը, նրանց վորակի բարձրացման հետ միասին պետք է կատարվի իր ժամանակին աշակերտներին մեկ կարգից մյուս կարգը փոխադրելու միջոցով։ Իսկ ուսուցման վերջին տարում գտնվող աշակերտների բարեկյալ, նույնպես հնարավորություն տալ նրանց կատարել գործարքային աշխատանքներ հասակավոր բանվորների հետ հավասար իրավունքներով, վճարելով կրճատ բանվորական որվա համար նրանց հիմնական դրույքով։

Աշխատավարձի ծրագրային բարձրացումը պետք է կատարվի յուրաքանչյուր ձեռնարկության և արհեստի համար նախատեսնված գումարների սահմաններում՝ իրեն ուղղակի նպատակին և վոչ մի կողմը չպետք է պահանջ առաջադրի ավելացնելու կամ. պակասեցնելու

կենտրոնական կարգով սահմանված ավելացման ֆոնդերը կամ թե պահանջել ծախսել այդպիսիները վոչ իրենց ուղղակի նպատակին, վորը տեղի յե ունեցել անցած հավաքական պայմանագրերի վերակնքման կամպանիայի մի շարք տնտեսական և արհեստակցական մարմինների կողմից: Արդյունաբերության այն ճյուղերում, վորոնց համար կենտրոնացված ավելացման ֆոնդից միջոցներ չեն բաց թողնված, աշխատավարձի աճումը ստուգիչ թվերով նախատեսնված սահմաններում պետք է վորոշվի բացառապես արտադրանքի ավելացումով և աշխատանքի արտադրողականության բարձրացումով: Վերջին յերկու-յերեք ամսվա փորձը ցույց տվեց, վոր աշխատավարձի աճումը առանձին ճյուղերում, առանձնապես թեթև արդյունաբերության մեջ, լինում է յուրաքանչյուր տարի ավելի բարձր, քան դա սահմանված է ստուգիչ թվերով: Ներկա հավաքական պայմանագրերի նպատակը կայանում է նրանում, վոր աշխատանքի ճիշտ չափավորման



և աշխատավարձի կանոնավորման ճանապարհով սահմանել այնպիսի փոխհարաբերություն աշխատավարձի աճման և աշխատանքի արտադրողականության մեջ, վորը ապահովի յուրաքանչյուր ձեռնարկության արդֆինծրագրի կատարումը:

Արդյունաբերության բոլոր ճյուղերում աշխատավարձի աճումը անհրաժեշտ է կապել ըստուգիչ թվերով սահմանված աշխատանքի արտադրողականության բարձրացման կիրառման հետ: Գալիք հավաքական պայմանագրերի կամպանիայում առանձին ուշադրություն պետք է դարձնել աշխատանքի չափավորման վրա, թեթև ինդուստրիայի, վորտեղ այդ աշխատանքները մինչ այժմ ընդհանուր առմամբ գտնվում են անբավարար դրության մեջ և վորի հետևանքով աշխատավարձի աճումը շատ դեպքերում գերազանցում է արդֆինծրագրով սահմանվածը և հաճախ չի փոխհատուցվում աշխատանքի արտադրողականության համապատասխան աճումով:

Աշխատավարձի կանոնավորումը հանրապետական և տեղական արդյունաբերություններում պետք է կատարվի այդ հանրապետությունների և շրջանների համար ստուգիչ թվերով սահմանված չափով։ Աշխատավարձի կանոնավորման կոնկրետ ծրագիրը ըստ արտադրության և արդյունաբերության առանձին ճյուղերի, ամբողջովին պետք է վորոշվի արհեստակցական միությունների խորհուրդների և հանրապետական ժողտնտխորհների համաձայնությամբ։

## 3. ՌԵԱԼ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Գալիք հավաքական պայմանագրերի կամպանիայում տնտեսական մարմինները և արհեստակցական միություններն առանձին ուշադրություն պետք է դարձնեն ռեալ աշխատավարձի աճման խնդրի վրա։

29/30 թվի համար նախատեսնված ռեալ աշխատավարձի բարձրացումը արդյունաբերության մեջ միջին հաշվով 13–14%-ով պետք է



լինի արհմիությունների աշխատանքների գըլխավոր խնդիրներից մեկը, վորոնք մինչև վերջին ժամանակներս բավականաչափ ուշադրություն չեն դարձրել բանվորներին պարեն մատակարարելու խնդիրների վրա, այնինչ արհմիությունների ակտիվությունը և վճռականությունը առևտրական ապարատի ռացիոնալացման բնագավառում, առաջին հերթին բանվորական կոոպերացիայի բնագավառում և գների իջեցման ասպարեզում, չնայած հացի և այլ գյուղատնտեսական ապրանքների մթերման դժվարություններին, կարող եյին ազդել մթերման լավացման և ռեալ աշխատավարձի աճման վրա։

Ակտիվ մասնակցություն ունենալով պարենավորման բնույթ կրող բոլոր հարցերում, արհմիությունները (և առաջին հերթին միջմիությունական մարմինները) պետք է ձգտեն վորպեսզի Առժողկոմատը և կոոպերատիվ մարմինները կազմեն բանվորական մատակարար-

ման յեռամսյա և տարեկան ծրագրեր ըստ շրջանների և հանրապետությունների:

Արհմիությունները պետք է ցույց տան ամեն տեսակի աջակցություն գյուղատնտեսական մթերքների, պարենի մթերման գործում և մաքսիմալ ուշադրություն դարձնեն չափավորման հարցերին, ժողովրդական սննդի ցանցի լայնացմանը, հերթերի դեմ պայքարի հարցերին (առևտրի հասարակայնացված սեկտորի լավացման ճանապարհով) և այլն: Դրա հետ միասին արհմիությունները պետք է դառնան պետական և կոոպերատիվ կազմակերպությունների կազմակերպման և հետագա զարգացման նախաձեռնողները՝ գյուղատնտեսական մթերքների վերամշակման և արտադրության գործում (մսի խորանոցների կազմակերպումը, ձկան տնտեսություն, լայնացումը կաթի ֆերմաների, կանաչու խորհրդային տնտեսությունների, կոլտնտեսությունների լայնացումը և այլն):

Անհրաժեշտ է կազմակերպել բանվորական



ակտիվ, սիստեմատիկաբար հսկելու համար կոոպերացիայի և Առժողկոմատի տեղի մարմինների աշխատանքների վրա:

## 4. ՏԱՐԻՖԱՅԻՆ ՌԵՖՈՐՄ

Գալիք հավաքական պայմանագրերի կամպանիայում տարիֆային ռեֆորմը պետք է վերջացվի արդյունաբերության այն ճյուղերում, վորտեղ այդպիսին անց է կացված, բայց չի վերջացած. իսկ այնտեղ, վորտեղ դեռ չեն ըսկսել տարիֆային ռեֆորմի անցկացումը, այդպիսին անցկացնելու ժամկետի և կարգի հարցը պետք է վորոշվի գլխավոր վարչությունների ու համապատասխան միության կենտկոմների համաձայնությամբ:

Արդյունաբերության այն ճյուղերում, վորտեղ աչքի առաջ ունեն գումարներ աշխատավարձի մեխանիկորեն բարձրացման համար, տարիֆային ռեֆորմն անցկացնելու համար կարելի յե ծախսել մեխանիկական ավելացման ֆոնդի գումարների մի մասը:

Այն ձեռնարկներում, վորոնց համար աշխատավարձի մեխանիկորեն բարձրացում չի նախատեսնված, տարիֆային ռեֆորման կարող է կիրառվել ի հաշիվ այն տնտեսումի, վորը կըստացվի նորմաների վերանայումից և վորն այս դեպքում պետք է ապահովի վոչ միայն աշխատավարձի և աշխատանքի արտադրողականության վերաբերյալ ստուգիչ թվերը, այլ և տարիֆային ռեֆորմը կիրառելու համար անհրաժեշտ ֆոնդերը:

Դրա հետ միասին անհրաժեշտ է վերացնել շատ պայմանագրերում մինչև այժմս պահպանված այն դրությունը, վորով ամսավճարով աշխատողների վարձատրությունը կատարվում է գործարքային սիստեմով վարձատրվողների միջին արտադրանքի հաշվով այն դեպքում, յերբ այդպիսիները վոչ մի կերպ չեն ազդում գործարքով աշխատողների արտադրողականության բարձրացման վրա: Սրանց համար պետք է սահմանել կայուն վարձատրություն համաձայն իրենց վորակի:



Ադմինիստրատիվ տեխնիքական կազմի և ծառայողների համար տարիֆային ռեֆորմը կիրառելիս պետք է վճռականորեն վերացնել պարգևատրման այնպիսի ձևերը, վորոնք աշխատավարձի թաքուն բարձրացման բնույթ են կրում: Տեխնիկական կազմի պարգևատրումը պետք է կատարվի իրական նվաճումների համար, վորոնք տալիս են տնտեսում համաձայն այս մասին գոյություն ունեցող օրենքների:

Տարիֆային ռեֆորմն ադմինիստրատիվ—տեխնիկական կազմի համար նույնպես պետք է անցկացվի աշխատավարձից զանազան տեսակի վերնաշենքերի վերացման ուղղությամբ, մտցնելով այդպիսիները հիմնական դրույքի մեջ, սակայն այնպես, վոր դրա հետևանքով առաջ չգա աշխատավարձի փաստացի մակարդակի շատ թե քիչ զգալի ցածրացում:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՉԱՓԱՎՈՐՈՒՄԸ

ՀԱՄԿԽ-ը և ժողտնտխորհն առաջարկում են

դալիք հավաքական պայմանագրերի կամպա-
նիայում նաև շարունակել լրացուցիչ համա-
ձայնություններ կնքելու պրակտիկան տնտ-
մարմինների և արհմիությունների միջև ար-
տադրանքի նորմաների վերանայման ծրագրի
կարգի և ժամկետների մասին: Նույնպես պետք
է վճռականորեն հրաժարվել նորմաների այն
տեսակի վերանայումից, վորը կրում է միա-
նվագ կամպանիայի բնույթ: Արտադրանքի
նորմաների և գործարքի գնահատումների վե-
րանայումը ու ստուգումը պետք է կատարվի
աշխատանքի արտադրողականության և աշխա-
տավարձի նախատեսնված չափերով աճումը ա-
պահովելու ուղղությամբ: Նորմաների ստու-
գումը և վերանայումը պետք է կատարվի տեխ-
նիկական չափավորման հիման վրա, հիմնված
աշխատանքի պրոցեսի սիստեմատիկ ուսում-
նասիրության գիտական տվյալների և խրոնո-
մետրաժ հսկողությունների, ինչպես և փորձ-
ված վիճակագրական տվյալների վրա, յեթե
վերջինների կողմից՝ հայտնաբերվում է նորմա-



ների զգալի գերարտադրանք: Արտադրանքի
նորմաների վերանայումը և ստուգումը պետք
է կատարվի սիստեմատիկաբար, ծրագրային
կարգով, ցեխը ցեխի հետևից, մի խումբ աշ-
խատանքները մյուս խմբի հետևից ամբողջ
տարվա ընթացքում, նույն թվում նաև պայ-
մանագրերի վերակնքման ժամանակ՝ տարիֆ-
չափավորման բյուրոյի կողմից նախապես մը-
շակված ծրագրով: Չափավորման բնագավա-
ռում հավաքական պայմանագրերը պետք է վո-
րոշեն նորմաների կառուցման միայն ընդհա-
նուր սկզբունքները և գործարքային գնահա-
տումների հաշվելու կարգը:

Բոլոր հավաքական պայմանագրերում պետք
է մտցնել կետ, վոր արտադրանքի նորմաների
վերանայումը պետք է կատարվի այն ուղղու-
թյամբ, վորպեսզի ապահովվի աշխատանքի
վերաբերյալ ստուգիչ թվերի կատարումն ըստ
յուրաքանչյուր ձեռնարկության, ցույց տա-
լով սահմանված ծրագրային առաջադրումներն
աշխատանքի արտադրողականության և աշխա-

տավարձի բարձրացման վերաբերյալ: Աշխատանքի արտադրողականության բարձրացման ապահովելու նպատակով ՀԱՄԿԽ-ը և Ժողտնտխորհը գտնում են, որ վերանայված արտադրական նորմաները պետք է ամրացվեն մեկ տարով:

Արտադրանքի նորմաների ժամանակից առաջ վերանայում պետք է կատարել այն դեպքերում, երբ տեխնիկական չափավորում անցկացնելու հետևանքով կհայտնաբերվի գոյություն ունեցող նորմաների ճշմարտությունը, ինչպես և այն դեպքերում, երբ նորմաների գործողության ժամանակվա ընթացքում մըտցըրվում է նոր կազմակերպչական և տեխնիկական, բանվորների արտադրանքի աճման վրա ազդող, բարելավումներ:

Նկատի ունենալով, որ գիտական տվյալների հիմնված տեխնիկական չափավորումը հանդիսանում է աշխատանքի ճիշտ կազմակերպման, աշխատանքի արտադրողականության բարձրացման և ամբողջ ձեռնարկության



աշխատանքների լավացման, աշխատավարձի աճումը ճիշտ կանոնավորելու—գլխավոր գործոնը ՀԱՄԿԽ-ը և Ժողտնտխորհը առաջարկում են տնտմարմիններին և արհմիություններին իրենց աշխատանքներում տեխնիկական չափավորման հարցերին հատկացնել կենտրոնական տեղ:

Արհմիությունները և տնտմարմինները պետք է ուժեղացնեն իրենց աշխատանքները չափավորողների կադրեր ընտրելու և ամրացնելու ուղղությամբ, ուժեղացնելով միաժամանակ գիտական տվյալների վրա հիմնված աշխատանքի տեխնիկական չափավորումը լայն բանվորական մասսայի մեջ մասսայականացնելու աշխատանքները:

## 6. ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՅԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Վերջին տարիների ընթացքում հավաքական պայմանագրերով ձեռք են բերված մի շարք

նվաճումներ բանվորների աշխատանքի իրավական և կենցաղային պայմանները լավացնելու ասպարեզում: ՀԱՄԿԽ-ը և Ժողտնտխորհն անհրաժեշտ են համարում գալիք պայմանագրերի կամպանիայում պահպանել հավաքական պայմանագրերում, հաշվի առնելով նաև աշխատանքի օրենսդրության մեջ յեղած փոփոխությունները, գոյություն ունեցող իրավական և կենցաղային պայմանների նորմաները—ինչպես և ստորադաս միութենական կազմակերպությունների և կուլտ. աշխատանքի համար հատկացվելիք գումարների չափը:

Անհրաժեշտ է նախատեսնել, վոր արտադրության մեջ բանվորական ուժի կարիք լինելու դեպքում բանվորների յերեխաները և չափահասները, վորոնք հաշվի յեն առնված Աշխբորսայում պետք է աշխատանքի ընդունվեն առաջին հերթին՝ հաստատուն բանվորների—միության անդամների հետ հավասար:

Արտադրության մեջ անչափահասների բրոնիա հավաքելիս առաջին հերթին պետք է ըն-



դունվեն բանվորների յերեխաները, վորոնք Աշխբորսայի հաշվառման մեջ են:

Անհրաժեշտ է նույնպես մեծ ուշադրություն դարձնել անչափահասների, ինչպես անհատական, բրիգադային նույնպես և Փարգործուսի դպրոցների ուսուցման լավ դրվածքի հարցերի վրա: Հավաքական պայմանագրերով պետք է նախատեսնվի հնարավոր չափով լավ մատակարարել դպրոցները նյութերով, գործիքներով, դազգյահներով և այլն, ինչպես և կենցաղային պայմանների լավացում (ինտերնատի պահպանում, սննդի լավացում և այլն):

Գալիք հավաքական պայմանագրերի կամպանիայում արհմիությունները պետք է մաքսիմում ուշադրություն դարձնեն աշխատանքի պաշտպանության հարցերին, աշխատանքի պայմանների ընդհանուր առողջացմանը, անվտանգության տեխնիկայի հարցերին, բնակարանային և ակումբային շինարարության լրիվ և իր ժամանակին զարգացմանը, մսուրների կառուցմանը և այլն, յելնելով 29–30 թ. արդ-

ֆինծրագրերով նախատեսված ծախքերի գումարներից:

Վերակնքվելիք պայմանագրերում պետք է սահմանվեն բոլոր անընդհատ շաբաթի անցնող ձեռնարկների աշխատանքների պայմանները և կարգը:

Բնական կոմմունալ ծառայությունների մասում անհրաժեշտ է վճռական գիծ ընդունել այդպիսիները վճարովի դարձնելու ուղղությամբ:

Կոմմունալ ծառայությունները վճարովի դարձնելու կարգը պետք է մշակվի պայմանագրերը վերակնքելու հետ միատեղ այն տեղերում, որտեղ նախապատրաստական աշխատանք է անցկացված: Այնտեղ, որտեղ այդ չի արված հավաքական պայմանագրերով պետք է սահմանվի ժամկետ, որի ընթացքում կոմմունալ ծառայությունները վճարովի դարձնելը պետք է իրականացվի:

Վերակնքվելիք պայմանագրերով պետք է նախատեսել աշխատավարձի, աշխատանքի պաշտպանության, աշակերտների և անչափա–



հասների կուլտուրական ու կենցաղային պայմանների հարցերը, մասնավորապես նրանց հատկացվելիք արձակուրդներն ամառային ամիսներում:

Միաժամանակ անհրաժեշտ է հավաքական պայմանագրերով նախատեսել հասակավոր կին բանվորների արտադրական որակը բարձրացնելու արդեն իսկ գոյություն ունեցող ձևի լայնացումը, նրանց մեծ չափով արտադրության մեջ քաշելու համար, նպատակ ունենալով բարձրացնել նրանց նյութական և կուլտուրական մակարդակը:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԿՆՔՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հավաքական պայմանագրերի կամպանիան անցկացնելու համար սահմանվում է հոկտեմբեր–դեկտեմբեր ամիսները: Հոկտեմբեր ամսվա ընթացքում պետք է անցկացվի ներկայումս գոյություն ունեցող պայմանագրերի մասսայական ստուգումը: Նոյեմբեր ամսվա

ընթացքում պետք է կատարվի պայմանագրերի նախագծերի մասսայական մշակումը ձեռնարկություններում: Կողմերի բանակցությունները պետք է վերջացվեն և պայմանագրերը ստորագրվեն դեկտեմբերի 20-ից վոչ ուշ այն հաշվով, վորպեսզի նոր պայմանագրերը բանվորների կողմից ստացվեն 30 թ. հունվարի 1-ից վոչ ուշ (կախված լինեն ցեխերում, կամ բաժանված բանվորներին):

Տնտմարմինների հետ բանակցություններ վարելու ընթացքում արհմիությունները պետք է սիստեմատիկաբար տեղեկացնեն բանվորական մասսային բանակցությունների ընթացքի մասին: Անցած տարվա հավաքական պայմանագրերի կամպանիայի ընթացքում նկատված յերևույթները և պայմանագրի ծրագրի քըննությունից հետո բանվորական մասսան վոչ մի տեղեկություն չէր ունենում բանակցությունների ընթացքի մասին, այս պայմանագրային կամպանիայի ընթացքում պետք է վերջնականապես վերացվեն:



Պայմանագրային կամպանիան պետք է անցկացվի, բացատրելով լայն բանվորական մասսային, վոր պայմանագիրը յերկկողմանի պարտադիր է, այսինքն նրա կատարումը պարտադիր է տնտմարմնի համար բոլոր, նրա կողմից իր վրա վերցրած պարտավորությունները կատարելու տեսակետից, և բանվորների համար բոլոր իրենց վրա վերցրած պարտավորությունները կատարելու տեսակետից:

Արհմիությունները պետք է ամեն կերպ լավացնեն պայմանագրերի հարցերի քննության պրակտիկան համագործարանային, ցեխային և ամենային ժողովներում, ձգտելով, վորպեսզի բոլոր բանվորները մասնակցեն պայմանագրերի բաց ելության քննության մեջ:

Տնտմարմինները պարտավոր են ամենակտիվ մասնակցություն ունենալ հավաքական պայմանագրերի կամպանիան մասսայի մեջ անցկացնելու գործում, ծանոթացնելով բանվորներին աշխատանքի արդյունքների և տվյալ տրեստի, ձեռնարկության ու ցեխի անցած

տարվա արդֆինծրագրի և 29–30 թվի առաջադրումների հետ, միաժամանակ բացատրելով բանվորներին արհմարմինների աջակցությամբ արդյունաբերության համար անիրագործելի պահանջները։

Արհմիությունները և տնտմարմինները պետք է առանձին ուշադրություն դարձնեն պայմանագրերի առանձին կետերի և ամբողջությամբ պարզ և հասկանալի խմբագրությանը, հաշվի առնելով, որ հաճախ ոչ բավարար պարզ խմբագրության հետևանքով առաջ են գալիս տարաձայնություններ նրա պարզաբանման մեջ և դրա հիման վրա զանազան կոնֆլիկտներ։

Անցած պայմանագրային կամպանիայում կոնֆլիկտների թիվը զգալիորեն աճել են, այնինչ շատ դեպքերում, կոնֆլիկտներն ունեցել են մանր խնդիրների բնույթ, վորն արդյունք է յեղել ղեկավարող տնտեսական արհեստակցական մարմինների, դիրեկտիվների, բյուրոկրատիկ խեղաթյուրումների, տեղերի տնտեսական և արհեստակցական կազմակերպությունների



կողմից, սա մի կողմից, և մյուս կողմից այն, վոր ցանկացել են այս կամ այն պայմանագրով վերցրած պարտականությունները վերցնել իրենց վրայից, և գնել հաշտարար ատյանների վրա։ Արձանագրելով այդ, միանգամայն անթույլատրելի և վնասակար վոլոկիտան, ինչպես տնտեսական, նույնպես և արհեստակցական մարմինների կողմից ՀԱՄԿԽ-ը և ժողտնտխորհն առաջարկում են գալիք պայմանագրական կամպանիայում վճռականորեն վերացնել այդ յերևույթը։ Վիճելի հարցերի լուծումը հաշտարար ատյանների միջոցով կարող է, և պետք է տեղի ունենա բացառապես միայն այն դեպքերում, յերբ բոլոր միջոցները, վիճելի հարցը կողմերի համաձայնությամբ լուծելու ուղղությամբ օգտագործված են, և համաձայնություն չի կայացել։

Վոչ ինդուստրիալ միությունների վերաբերյալ ստուգումն անցկացնելու և պայմանագրերի վերակնքելու կարգը հիմնականում պետք է լինի նույնը, ինչ վոր ինդուստրիալ միու-

թյուններին է: Հանրապետական և տեղական արդյունաբերության պայմանագրերը կնքելու ժամկետների մասին ՀԱՄԿԽ-ը և Ժողկոմխորհն առաջարկում են թողնել գոյություն ունեցող ժամկետները: Այնտեղ, վորտեղ ժամկետների փոփոխումը նպատակահարմար է այդ հարցերը պետք է համաձայնեցվեն շահագրգռված մարմինների կողմից, համապատասխան արհեստակցական միությունների խորհուրդների հետ:

Պայմանագրերի վերակնքման կամպանիային, վորը շոշափում է բանվոր դասակարգի անմիջական շահերը, տալով մեծ քաղաքական և տնտեսական նշանակություն, արհմիությունները և տնտմարմինները կդնեն իրենց մաքսիմում ուժը, եներգիան, ինիցիատիվան տանելու հաջող աշխատանք և իր ժամանակին վերջացնելու հավաքական պայմանագրերի վերակնքումը:

ՀԱՄԿԽ-ի քարտուղար՝ ԴՈԳԱԴՈՎ

Ժողկոմխորհի նախագահ՝ ԿՈՒՅԲԻՇԵՎ



ՀՀ Ազգային գրադարան
NL0196631

331.1
Z-94